


*Իրական ժամանակի ռեժիմ (աշխատում է վայրկյանի ցուցիչը)*

***Ամսաթվի*** ցուցադրման համար սեղմեք START իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս:

## ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 3 անգամ սեղմեք MODE, որպեսզի գործարկվի ժամանակի կարգավորման ռեժիմը (թարթում է վայրկյանի ցուցիչը): Ուղղեք թարթող տարրը՝ սեղմելով START: Սեղմեք RESET՝ այլ տարրեր ընտրելու համար: START ստեղնը սեղմած պահելը փոփոխում է թիվը բարձր արագությամբ: Կարգավորման ավարտից հետո սեղմեք MODE՝ իրական ժամանակի ռեժիմ վերադառնալու համար:

Ժամն ուղղելու ընթացքում ընտրեք «A» / «P»՝ 12-ժամյա (***AM/PM***) ֆորմատով ցուցադրման համար, կամ «H»՝ ***24-ժամյա*** ֆորմատով ցուցադրման համար:

## ՎԱՅՐԿԵՆԱՉԱՓ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 1 անգամ սեղմեք MODE, որպեսզի գործարկվի վայրկենաչափի ռեժիմը:

Սեղմեք START վայրկենաչափի միացման/անջատման համար: Սեղմեք RESET վայրկենաչափը զրոյացնելու համար:

## ԶԱՐԹՈՒՑԻՉ

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս 2 անգամ

սեղմեք MODE, որպեսզի գործարկվի զարթուցիչի կարգավորման ռեժիմը (թարթում է ժամի ցուցիչը):

Ուղղեք զարթուցիչի ժամը՝ սեղմելով START: Սեղմեք RESET՝ զարթուցիչի րոպեն ընտրելու, և START՝ այն ուղղելու համար: START ստեղնը սեղմած պահելը փոփոխում է թիվը բարձր արագությամբ: Զարթուցիչի կարգավորման ավարտից հետո սեղմեք MODE՝ իրական ժամանակի ռեժիմ վերադառնալու համար:

***Կարևոր է.*** Զարթուցիչի ձայնային ազդանշանի հնչելու համար, դրա ժամանակը կարգավորելուց բացի, անհրաժեշտ է, որ այն միացած լինի: Կառավարեք ***զարթուցիչի*** (((•))) ֆունկցիայի միացումը/անջատումը՝ իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս RESET և START ստեղները միասին սեղմելով:

Զարթուցիչի ձայնային ազդանշանի հնչելիս սեղմեք RESET այն անջատելու համար, կամ START՝ ***կրկնելու (snooze)*** ֆունկցիայի գործարկման համար, ինչի դեպքում ձայնային ազդանշանը կկրկնվի 5 րոպե անց:

Իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս RESET սեղմելով՝ հնարավոր է տեսնել զարթուցիչի ժամանակի տվյալը:

## ԱՄԵՆԺԱՄՅԱ ԱԶԴԱՆՇԱՆ

Ամենժամյա ազդանշանի ֆունկցիան միացնելու/անջատելու համար, իրական ժամանակի ռեժիմում գտնվելիս, սեղմեք RESET և MODE ստեղները միասին: